ԿԱՐԾԻՔ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՍՊԻՐԱՆՏ ԶԱՐՄԻԿ ՎԱՀԱՆԻ ՄԵԼԻՔՅԱՆԻ «ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՆՆԴԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ» ԹԵՄԱՅՈՎ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ Ը.00.02 - «ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ, ՆՐԱ ՈԼՈՐՏՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ՀԱՄԱՐ

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Զարգացած և հզոր տնտեսություն ձևավորելու համար անհրաժեշտ է երկրում ստեղծել բարենպաստ և գրավիչ ներդրումային միջավայր, քանի որ այն տնտեսական աճի ապահովման հիմնական գրավականն է: Ներդրումային բարենպաստ միջավայրը բնութագրվում է քաղաքական կայունությամբ, հստակ օրենսդրությամբ, ներդրողների շահերի պաշտպանությամբ, վարկերի ցածր տոկոսադրույքներով և արտոնություններով: Ներդրումային միջավայրի գնահատական, ներդրումային որոշման կայացման կարևորագույն գործոն է:

Ներդրումների ներհոսքը սննդարդյունաբերության ոլորտ և համատեղ ձեռնարկությունների թվի ավելացումը կնպաստի պարենային ինքնաապահովման խնդիրների լուծմանը, բնակչության զբաղվածության ապահովմանը, որով էլ կարևորվում է թեմայի արդիականությունը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հետազոտության նպատակն է ներկայացնել ՀՀ սննդարդյունաբերության ոլորտում ներդրումային միջավայրի բարելավման ուղիներ, որոնք կնպաստեն

ներդրումային ոլորտային ծրագրերի արդյունավետ կառավարման իրագործմանը և ներդրումների գծով հիմնավոր կառավարչական որոշումների կայացմանը: Ելնելով հետազոտության նպատակից, ատենախոսությունում առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- բացահայտել սննդարդյունաբերության զարգացման ռազմավարությունից բխող ՀՀ ներդրումային միջավայրի բարելավման ուղիները, վերհանել մրցակցային ներդրումային գործունեության հնարավորությունները սննդարդյունաբերության ոլորտում,
- դասակարգել սննդարդյունաբերության ներդրումային միջավայրի ձևավորման վրա ազդող գործոնները ըստ ներդրումային գործունեության ներազդեցության աստիճանի,
- մշակել ներդրումային ծրագրերի վարկանիշավորման համակարգ, հնարավորություն ստեղծելով ներդրումային միջավայրը ձևավորող բաղադրիչների գնահատման արդյունքում բացահայտելու ներդրումային ուղղությունների գերակայությունները սննդարդյունաբերության ոլորտում,
- մշակել սննդարդյունաբերության ոլորտի ներդրումային ռիսկերի կառավարման կառուցակարգ, ուղղված ներդրումային ծրագրերի իրականացման արդյունքում առաջացող հավանական վնասների գնահատմանը և վերահսկմանը,
- հիմնավորել սննդարդյունաբերության ոլորտի ներդրումային միջա-վայրի կառավարման հայեցակարգային մոտեցումներ, հիմնված ոչ միայն ներդրումների ֆինանսատնտեսական հատույցի, այլև այդ գործընթացին առնչվող ներքին և արտաքին շահառուների սոցիալ-տնտեսական սպա-սումների վրա:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ելնելով դրված նպատակից, հեղինակը ատենախոսության առաջաբանում հանգամանորեն հիմնավորել է ատենախոսության թեմայի արդիականությունը և հրատապությունը:

Հետազոտության առաջին՝ «Ներդրումային միջավայրի ձևավորումը Հայաստանի Հանրապետության սննդարդյունաբերության ոլորտում» գլխում ուսումնասիրել է սննդարդյունաբերության ռազմավարական զարգացման միտումները և ներդրումները ՀՀ-ում, Հայաստանի ներդրումային միջավայրի գրավչությունը և առանձնահատուկ բնութագրիչները:

Ատենախոսությա երկրորդ՝ «Հայաստանի Հանրապետության սննդարդյունաբերության ոլորտում ներդրումային միջավայրի որակական գնահատման հիմնախնդիրները» գլխում ուսումնասիրել է ներդրումային ներուժի գնահատման մոտեցումները, վերլուծել է ներդրումային միջավայրի և արտաքին առևտրի փոխառնչության շրջանակը ՀՀ սննդարդյունաբերության ոլորտում:

Ատենախոսության երրորդ՝ «Ներդրումային միջավայրի կառավարման բարելավման հիմնախնդիրների լուծման ուղիները Հայաստանի Հանրապետության ագրոպարենային համակարգում» գլխում առաջադրել է ագրոպարենային համակարգում ներդրումային միջավայրի կառավարման առանձնահատկությունները, ներդրումային ռիսկերի կառավարման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետության սննդարդյունաբերության ոլորտում, ինչպես նաև ներդրումային միջավայրի կառավարման հայեցակարգային հիմնախնդիրները:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Ատենախոսությունում իրականացված հետազոտությունների ու վերլուծությունների հիման վրա մշակվել են հետևյալ գիտական նորույթները.

- բացահայտվել են սննդարդյունաբերության ոլորտում ներդրումային միջավայրի վրա ազդող գործոնները, գնահատվել է ներդրումային միջավայրի վրա դրանց ազդեցության աստիճանը՝ ուղղված արդյունավետ կառավարչական որոշումների ընդունմանը,
- ներդրումային ծրագրերի իրականացման առաջնահերթությունների ընտրության նկատառումներով մշակվել է ներդրումային ծրագրերի վարկանիշավորման համակարգ,

- մշակվել է ՀՀ սննդարդյունաբերության ոլորտի ներդրումային ռիսկերի կառավարման կառուցակարգ՝ ուղղված ներդրումային ծրագրերից բխող հավանական վնասների կանխարգելմանը «գյուղատնտեսական մթերքների արտադրություն - վերամշակում - իրացում» տնտեսական գործունեության շղթայում,
- մշակվել են ՀՀ սննդարդյունաբերության ներդրումային միջավայրի կառավարման հայեցակարգային մոտեցումներ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախուսությունն իրենից ներկայացնում է Հայաստանի Հանրապետության սննդարդյունաբերության ոլորտի ներդրումային միջավայրի տեսական և գործնական ուսումնասիրությունների հիման վրա մշակված համալիր հետազոտություն, որը ներառում է որոշակի հիմնարար առաջարկություններ՝ ուղղված վերջինիս բարելավման հայեցակարգային ուղիների բացահայտմանը;

Ատենախոսության արդյունքները, կատարված առաջարկությունները և մշակված մոտեցումները կարող են գործնական կիրառություն գտնել Հայաստանում իրականացվող ներդրումային քաղաքականությունում՝ նպաստելով կազմակերպությունների ներդրումային գործառույթների բարելավմանը, ներդրումային ծրագրերի արդյունավետության գնահատմանը, ներդրումների ոլորտում կառավարչական որոշումների բարելավմանը:

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ատենախոսության ուսումնասիրության արդյունքում բացահայտվել են որոշակի թերություններ, որոնցից կարելի է առանձնացնել հետևյալները.

1. Ատենախոսության 1.1.1 (էջ 11), գծապատկերի անվանման հատվածում առկա է բացթողում, մասնավորապես պետք է գրված լինի «Սննդամթերքի,

խմիչքների և ծխախոտի արտադրության դինամիկան ՀՀ-ում 2014-2018թթ. (մլն դրամ)», նույն բացթողումը գծապատկեր 1.1.2 (էջ 12):

2. Աշխատանքում «Սննդամթերքի հիմնական տեսակների տարեկան սպառումը մեկ շնչի հաշվով» 1.3.3 աղյուսակում (էջ 36) ցանկալի կլիներ ընդգրկել սննդամթերքի սպառման գիտականորեն հիմնավորված նորմանները մեկ շնչի հաշվով և համեմատական վերլուծություն կատարել փաստացի սպառված սննդամթերքի ծավալների նկատմամբ:
3. «Արտահանման և ներմուծման դինամիկան ՀՀ սննդարդյունաբերության ոլորտում» 2.2.1 աղյուսակում (էջ 63) ներկայացված չէ գինու, կոնյակի, գարեջրի, և ոչ ալկոհալային խմիչքների արտահանման ու ներմուծման ծավալները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Զարմիկ Վահանի Մելիքյանի «Ներդրումային միջավայրի բարելավման հիմնախնդիրները ՀՀ սննդարդյունաբերության ոլորտում» թեմայով թեկնածուական ատենախոսությունը աչքի է ընկնում խնդիրների քննարկման տրամաբանական հաջորդականությամբ: Հեղինակին հաջողվել է լուծել իր առջև դրված խնդիրները: Կատարված հետազոտության հիմնական արդյունքները հրապարակված են հեղինակի 9 գիտական հոդվածներում: Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է հետազոտության բովանդակությանը և արտացոլում է հիմնական դրույթներն ու արդյունքները:

Զարմիկ Վահանի Մելիքյանի «Ներդրումային միջավայրի բարելավման հիմնախնդիրները ՀՀ սննդարդյունաբերության ոլորտում» թեմայով թեկնածուական ատենախոսությունը իր արդիականությամբ, գիտական մակարդակով, կիրառական հնարավորություններով և ստացված արդյունքների նորությամբ համապատասխանում է Հայաստանի Հանրապետության գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի և թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող ՀՀ ԲՈԿ-ի պահանջներին, իսկ ատենախոսության

հեղինակ Զարմիկ Վահանի Մելիքյանը արժանի է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը՝ Ը.00.02 - ‹‹Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում ›› մասնագիտությամբ:

Պաշտոնական ընդդիմախոս,

տնտեսագիտության թեկնածու **Մ. Է. Հովհաննիսյան**

Տնտեսագիտության թեկնածու Մարիաննա Էդուարդի Հովհաննիսյանի ստորագրության իսկությունը հաստատում եմ.

ՀԱԱՀ գիտ. քարտուղար, գ.գ.թ., դոցենտ **Գ.Վ. Ավագյան**

12 հոկտեմբեր 2020 թ.